

11439

Պրոպագանդայի և հասարակական կրթության նախարարություն

Քրոնիկներ

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԾՐԱԳԻՐ

ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՄԱԿՆԵՐՈՒՄ

ՉՍՈՎՈՐԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ

ՅԵՎ ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

3(07)  
2-90

ԽՍՀՄ-ԻՍՏԱՆԲՈՒԼ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ 1986

39

36-Ա

Ձ1100

3(07)

Ջ-90

25 SEP 2006

Պրոֆեսարների բոլոր յեկիրձների միացե՛ր

1 DEC 2009

ՁրոհիՅՅների որինԱԿԵԼԻ  
 ԾրԱԳԻՐ ՔԱՂԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
 ԽՄԲԱԿՆԵՐՈՒՄ ՉՍՈՎՈՐԱԾ  
 ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՅԵՎ  
 ՀԱՄԱԿՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ



02-18492

} ԱՅԿԱՆՔԻ ԱՊՐԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՆԵՐՈՒՄ • ԵՐԵՎԱՆ • 1986

13.04.2013

11439

Խմբագիր Հ. Գասպարյան,  
Քարգմ. Հ. Թուրյան,  
Տեխն. խմբ. Ս. Նաչատրյան, Սրբազրիչ Տ. Մուրադյան

Գլավիտի լիազոր Շ-96, հրատ. № 341  
Պատվեր № 433, տիրոժ 3000, ինդեքս  $\frac{\text{П-14}}{\text{У}}$

Հայկուսոհրատի տպարան, Յեքեվան, Ալլահվերդյան 27



59481-66

ПРИМЕРНЫЙ ПЛАН БЕСЕД ДЛЯ КАНДИДАТОВ И  
СОЧУВСТВУЮЩИХ НЕ, УЧИВШИХСЯ В КРУЖКАХ  
ПОЛИТГРАМОТЫ  
Аршпартыздат, Երևան

### ԱՌԱՋԻՆ ՎԱՐԻԱՆՏ

ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՅՑ

ԻՆՉ Ե ԴԱՍԱԿԱՐԳԸ ՅԵՎ ԻՆՉԻՑ Ե ԾԱԳՈՒՄ  
ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅԳԱՐԸ

Կապիտալիստները և բանվորները: Կապիտալիստները  
հարստացումը վարձու աշխատանք չահագործելու  
միջոցով: Աշխատավոր դյուղացու չահագործումը կա-  
պիտալիզմի ժամանակ: Կալվածատիրոջ և կուլակի  
լուծը: Բանվորական մասսաների աճող աղքատացումը  
կապիտալիզմի ժամանակ: Գործազրկության աճումը  
և գործազրկիկների մշտական բանակի առաջացումը:  
Չքափոր և միջակ դյուղացիություն հիմնական մաս-  
սաների արագ քայքայումը: Փաստեր և թվեր արտա-  
սահմանի բանվորների և աշխատավոր դյուղացիների  
կյանքից: Բանվորների և աշխատավորների քաղաքա-  
կան դրուժյունը կապիտալիզմի յերկիրներում: Ֆա-  
շիզմի սպառնալիքի աճումը բոլոր կապիտալիստական  
յերկիրներում:

Կապիտալիստների տիրապետությունը հիմնված է

այն բանի վրա, վոր բոլոր Փարբիկները, գործարանները, մեքենաները և հողի հսկայական մասը նրանց մասնավոր աեփականությունն է: Կապիտալիստների նպատակն է—հավերժացնել բանվորներին և բոլոր աշխատավորներին շահագործելու ու կեղեքելու կարգը:

Կապիտալիստները և բանվորները—մեկը մյուսին մահահու թշնամի դասակարգեր են:

Պրոլետարիատի նպատակն է— վոչնչացնել կապիտալիստական կարգը և անդասակարգ, կոմունիստական հասարակություն կառուցել: Իր նպատակն իրագործելու համար պրոլետարիատը պետք է բռնի կերպով իր ձեռքը վերցնի պետական իշխանությունը և հաստատի իր դիկտատուրան: Ինչպես է ընթացել և ինչպես է ընթանում տասպալված շահագործական դասակարգերի ընդլիմադրությունը հաղթանակած պրոլետարիատին: Սաբոտաժը: Քաղաքացիական պատերազմը և ինտերվենցիան: Վնասարարությունը: Զախլախված դասակարգային թշնամու ուղղակի հարձակումից դեպի դադարադուր աշխատանքի անցումը: «Բանվորների» և «գյուղացիների» դիմակի տակ Փարբիկները, գործարանները, կոլտնտեսությունները և նույնիսկ կուսակցության շարքերն իրենց լրտեսներն ուղարկելը: Դասակարգային թշնամու նոր տակտիկան ցույց տվող փաստեր: Մեր կուսակցության պայքարը հեղափոխական զգոնությունը բարձրացնելու համար: Հեղափոխական զգոնությունն այն հատկությունն է, վորն այժմ առանձնապես անհրաժեշտ է կոմունիստին:

ԻՆՉՈՒ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԸ ՁԻ ԿԱՐՈՂ ՀԱՂԹԵՆ ԱՌԱՆՑ ԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ

Պրոլետարիատի կուսակցությունը—դա նրա առաջավոր, ամենից ավելի գիտակից, ամենից ավելի փորձված մասն է, վորը դիտե գործը վարել և մասսաներին ցույց է տալիս իրենց պայքարի ճիշտ ուղին: Ինչպես բոլշևիկների կուսակցությունը Լենինի և Ստալինի ղեկավարությամբ Հոկտեմբերի համար մղվող պայքարում իր կողմը նվաճեց բանվորներին և ինչպես՝ բոլշևիկների ղեկավարության շնորհիվ, մեր յերկրի պրոլետարիատը նվաճեց պետական իշխանությունը և քաղաքացիական անողոք պատերազմում պահպանեց այդ իշխանությունը:

Ինչպես մեր կուսակցությունը մեր յերկրում Ստալինի ղեկավարությամբ՝ հասավ սոցիալիզմի հաղթանակին մեր յերկրում, նախապատրաստեց գյուղացիների շրջադարձը դեպի կոլտնտեսությունները և նրանց համար բաց արեց ունևոր կյանքի ուղին:

Ինչու պարտություն կրեցին Գերմանիայի պրոլետարական հեղափոխությունը 1918 թվին, Հունդարիայի հեղափոխությունը:

Կոմունիստական կուսակցությունը—պրոլետարիատի միակ կուսակցությունն է, վորը պայքարում է նրա շահերի համար և բոլոր աշխատավորների շահերի համար՝ շահագործող դասակարգերի դեմ:

Սոցիալիզմի հաղթանակը ՈՍՀՄ-ում և համաշխարհային պրոլետարիատի աճող համախմբումը Ուրհուրդների յերկրի շուրջը:

II Ինտերնացիոնալի քաղաքականության անանկու-

Թյունը, քաղաքականութիւն, վորը հաղթութիւն բերեց Փաշիգմին Գերմանիայում և պարտութիւն մատնեց բանվորներին Ավստրիայում, Սպանիայում :

Հեղափոխական տեղաշարժեր II Ինտերնացիոնալի մեջ մտնող բանվորների շրջանում : Կոմինտերնի VII կոնգրեսի մշակած միասնական ճակատի տակտիկայի նշանակութիւնը պրոլետարիատի դասակարգային խնդիրներէ հաղթական լուծման համար : Կոմունիստական Ինտերնացիոնալը—համաշխարհային պրոլետարական հեղափոխութիւն շտարն և :

Կոմունիստական կուսակցութիւն անանձնահատկութիւնները, վորոնք նրան ընդունակ են դարձնում հաղթանակի առաջանորդելու պրոլետարիատին : Կոմունիստական կուսակցութիւնը—Մարքսիզմ - Լենինիզմի թեորիայով սպառազինված կուսակցութիւն և : Հետեողականորեն կայուն դասակարգային դիժը, վորը և վոչ մի շափով չի հաշտվում պրոլետարիատի թշնամիներէ հետ : Անողոք պայքար դասակարգայնորեն խորթ դորձակալութիւն հետ բանվոր դասակարգի միջև կուսակցութիւն շարքերում, Լենինյան դիժը յեղած շեղումներէ դեմ : Խստագոյն դիտակցական կարգապահութիւն կուսակցութիւն ներսում, նրա շարքերի յերկաթյա զոգվածութիւնը, նրանում Ֆրակցիաներ ու խմբավորումներ թույլ չտալը, անդու ինքնաքննադատութիւնը և պայքարի միջոցով ամեն տեսակի սպորտունիստական տատանումներէ հաղթահարումը—մեր կուսակցութիւն հաղթանակներէ կարևորագոյն աղբյուրն են : Կուսակցութիւն անդամներէ մեջ հեղափոխական արիութիւն, հերոսութիւն և ինքնուրույնութիւն դաստիարակելը : Բու-

չևիկներէ հերոսական պայքարը ցարական ընդհատակում, բոլշևիկներէ հերոսական պայքարը քաղաքացիական պատերազմում : Փաշիգմի դեմ մղվող պայքարի հերոսները :

ՅԵՐՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ Ե ԿՍՈՒՌՅՎԱԾ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, ՎՈՐՈՒՔ ԵՆ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցութիւնը վորպէս կոմունիստական Ինտերնացիոնալի սեկցիա :

Դեմոկրատական ցենտրալիզմը - կուսակցութիւն կազմակերպական կառուցման դեկալար սկզբունքն է. ինչ է նշանավորում այդ սկզբունքը : Կուսակցութիւն կառուցման տերիտորիալ—արտադրական հատկանիշը : Կուսակցութիւն կենտրոնական կազմակերպութիւնները,—կենտրոնական կոմիտեն, Կենտկոմի Քաղբյուրոն և նրա կազմը, Կենտկոմի կազմակերպչական բյուրոն, կուսակցական վերահսկողութիւն հանձնաժողովը : Կուսակցութիւն յերկրամասային, մարդային, հանրապետական կազմակերպութիւնները, սկզբնական կուսակցական կազմակերպութիւնը, Կարմիր բանակի կուսակազմակերպութիւնները : կուսակցական խմբակներն արտակուսակցական կազմակերպութիւններում :

Ով կարող է լինել կուսակցութիւն անդամ : Կուսակցութիւնի XVII համագումարի ընդունած կանոնադրութիւնն ինչ պարտականութիւններ է սահմանել նրա համար : Կուսակցութիւն անդամ ընդունելու կարգը,

Թեկնածու ընդունելու կարգը և թեկնածվական ստաֆ նշանակելը: Համակրողների խմբակներ:

Կուսակցութունն ինչպես է պայքարում իր շարքերի մաքրության համար: Կուսակցական կազմակերպությունների կուսակցական-դաստիարակչական աշխատանքը: Պայքար իդեոլոգիական աշխատանքը կուսակցության բոլոր ողակներում ուժեղացնելու համար: Կուսակցության անդամները կողմից իրենց կուսակցության պատմությունն ուսումնասիրելու ատանձնահատուկ կարեւորությունը: Կուսակցության պայքարն իր շարքերը խորթ տարրեր, խարեբաներ, ալյասերվածներ և յերկերեսանիններ ներթափանցելու դեմ: Կուսակցության պարբերական զտումները: Կուսակցական փաստաթղթերի ստուգումը: Կուսակցության կանոնադրությունը խախտողների նկատմամբ կանոնադրությամբ նախատեսնված տուժերը: Կուսակցության կանոնադրությունը կոմունիստի պարտականությունների մասին:

### ՁՈՐՈՐԴ ՁՐՈՒՅՑ

ԼԵՆԻՆՆ ՈՒ ՍՏԱԼԻՆԸ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐՆ ԵՆ

Լենինը և Ստալինը պրոլետարիատի և բոլոր աշխատավորների մեծագույն առաջնորդները, կոմունիստական Ինտերնացիոնալի ներշնչողներն ու կազմակերպիչներն են: Լենինն ու Ստալինը վորպես Մարքսի և Ենգելսի ուսմունքի ու գործի շարունակողները: Լենինի կյանքի ուղին: Ընկ. Ստալինը Լենինի մասին:

Լենինն ինչպես է ստեղծել բուլշևիկների կուսակցությունը: Վորպիսի թշնամիների դեմ մղվող պայքարում Լենինն աճեցրել է բուլշևիկյան կարգերը: Լենինն ինչպես է Ռուսաստանի բանվոր դասակարգին հաղթական մարտի առաջնորդել Հոկտեմբերյան որերին: Լենինն ինչպես է սոցիալիզմի կառուցման հիմքը դրել մեր յերկրում:

Ընկեր Ստալինը-Լենինի ամենամերձավոր զինակիցը և նրա գործը շարունակողը: Ստալինի կյանքի ուղին: Ընկեր Ստալինի հեղափոխական աշխատանքն Անդրկովկասում և նրա կողմից մեր կուսակցության խոչորագույն կազմակերպությունն ստեղծելը: Ստալինի առաջին ծանոթությունը Լենինի հետ: Ստալինի պայքարը բուլշևիզմի թշնամիների դեմ՝ ընդհատակի շըրջանում: Ստալինի դերը Հոկտեմբերյան հաղթանակը կազմակերպելու մեջ: Ընկեր Ստալինը վորպես հաղթանակների կազմակերպիչ՝ քաղաքացիական պատերազմի բոլոր վճռողական ճակատներում: Ընկեր Ստալինը վորպես սոցիալիզմի հաղթանակի ներշնչողն ու կազմակերպիչը մեր յերկրում: Ընկեր Ստալինն դաստիարակում է սոցիալիզմ կառուցողներին, մեր հայրենիքի հերոսներին:

ԻՆՉՊԵՍ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԸ ԲՈԼ-  
ՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ  
ՔՇԵՑԻՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻՆ ՈՒ ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵ-  
ՐԻՆ, ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԵՆՑ ԶԵՌՔԸ ՎԵՐՑՐԻՆ,  
ՊԱՇՏՊԱՆՅԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝  
ԻՐԵՆՑ ՅԵՎ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ  
ԳԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Բանվորները կյանքը մինչև հեղափոխությունը,—  
աշխատողի մեջ կար լինել, աշխատավարձը ինչ պայ-  
մաններում էլ ին առաջ բանվորներն աշխատում.  
Գործազրկությունը բանվորի կենցաղը: Բանվորուհու  
առանձնապես ծանր դրությունն արտադրություն մեջ  
և կենցաղում: Բանվորների քաղաքական իրավազրկու-  
թյունը ցարական Ռուսաստանում: Գյուղացիների  
կյանքը մինչև հեղափոխությունը. հողն ինչպես եր  
բաշխված մինչև հեղափոխությունը: Կալվածատիրոջ և  
կուլակի ճնշումը: Յարական հարկերը, դանձումները,  
տուրքերը: Մանր և միջակ գյուղացիական տնտեսու-  
թյունների քայքայումը: Յարական կառավարությունն  
ինչպես եր հարբեցնում գյուղը և մթազնում գյուղացի-  
ների և բանվորների հետամնաց շերտերը, հրահրում  
եր ազգային թշնամանքը: Յարական Ռուսաստանը—  
ժողովուրդների բանտ:

Բանվորներն ու գյուղացիներն ինչպես էլ ին պայ-  
քարում կապիտալիստների և կալվածատերերի դեմ:  
Բանվորների գործադուլները, նրանց մարտերը վոս-  
տիկանություն, ժանդարմերիայի հետ և ապստամբու-  
թյունները ցարի ու կապիտալիստների դեմ: Գյուղա-

ցիական ապստամբությունները: Բանվորական առա-  
ջին խմբակները: Լենինի կողմից «Բանվոր դասակար-  
գի ազատագրության պայքարի Միություն» կազմա-  
կերպումը և վերջինի դերը բանվոր դասակարգի գոր-  
ծադուլային պայքարի ղեկավարման գործում: Բուլշե-  
վիկյան կուսակցությունն ստեղծումը (1903 թ.) և  
նրա ղեկավար դերը բանվոր դասակարգի և գյուղա-  
ցիության պայքարում՝ ցարի, կապիտալիստների և  
կալվածատերերի դեմ: Բուլշևիկները ռուսական առա-  
ջին 1905—1907 թվերի հեղափոխության ղեկավար-  
ման գլուխն անցած: Բուլշևիկյան կուսակցության աշ-  
խատանքը սև ռեակցիայի և հեղափոխական վերելքի  
չըջանում: Բուլշևիկները աշխատանքն իմպերիալիս-  
տական պատերազմի շրջանում. իմպերիալիստական  
պատերազմը քաղաքացիական պատերազմի վերածելու  
նրանց լողունը: Բուլշևիկյան կուսակցությունն ինչ-  
պես կազմակերպեց մասսաներին և ղեկավարեց ցա-  
րական ինքնակալության տապալումը 1917 թվի վե-  
տրվարին:

ԻՆՉՊԵՍ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԸ ԲՈԼ-  
ՇԵՎԻԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ  
ՔՇԵՑԻՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏՆԵՐԻՆ և ԿԱԼՎԱԾԱՏԵՐԵՐԻՆ,  
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՐԵՆՑ ԶԵՌՔԸ ՎԵՐՑՐԻՆ, ՊԱՇՏ-  
ՊԱՆՅԵՑԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԻՐԵՆՑ  
և ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ԳԵՄ ՄՂՎ-  
ՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ).

Ինչու 1917 թվին ցարին տապալելուց հետո իշխա-  
նությունն անցավ բուրժուազիայի ձեռքը: Մենչևիկ-

նենք, եսերնեքը—բուրժուազիայի գործակալներն են, բանվորների և գյուղացիները թշնամիները: Բուրժուազիան ինչպես եր փորձում խեղդել հեղափոխությունը (բուլճերիկյան թերթերի խափանումը, մասապատժի մուծումը, պատերազմի շարունակումը, բանվորները զնդակահարությունը հուլիսի 3—4-ին, Կորնելովականությունը): Բուլճերիկներն ինչպես էլին նախապատրաստում բանվորներին և գյուղացիներին՝ գործակալ կապիտալիզմը: Չինված ապստամբության Լենինյան պլանը: Չինովյեվի և Կամենեվի դավաճանական դերը Հոկտեմբերյան ապստամբության հանդեպ: Բուլճերիկները Լենինի և Ստալինի գլխավորությամբ, վորպես զինված ապստամբության կազմակերպիչներն ու ղեկավարները: Ինչպես բուլճերիկների ղեկավարությամբ բանվոր դասակարգը՝ չքավորազույն գյուղացիության աջակցությամբ՝ 1917 թվի նոյեմբերի 7-ին (հոկտեմբերի 25-ին) տապալեց կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը և հաստատեց պրոլետարիատի ղեկառությունը: Խորհրդային իշխանության յեռամյա պայքարը ռուսական ղեկներալները սպիտակ դավադրական բանակները, հայրենի կապիտալիստները և կալվածատերերը ու ամբողջ բուրժուական աշխարհի դեմ: Այդ պայքարում ինչպես եր մեզ ողնում կապիտալիստական յերկիրները պրոլետարիատը: Ինչու արտասահմանյան կապիտալիստներն ոժանդակում էլին ռուսական կապիտալիստներին և կալվածատերերին: Քաղաքացիական պատերազմի հաղթական վախճանը: Ընդ. Ստալինի դերը ներքին և արտաքին հակահեղափոխությունը ջախջախելու մեջ: Բուլճերիկյան կուսակցության դերը

բանվոր դասակարգի շարքերի կազմակերպման, գյուղացիների հիմնական մասսայի հետ բանվորների դաշինքի ամրապնդման և անպարտելի Կարմիր բանակի ստեղծման մեջ:

ՅՈՒՅՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ ԲՈՂՇԵՎԻԿՆԵՐԸ ԽՍՀՄ-Ը ԴԱՐՁՐԻՆ ԱՌԱՋ  
ԶՆՎՈՐ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՅԵՐԿԻՐ և ՀԱՍՍՆ  
ԿՈՂՏԵՍՍՅՈՒՆ ԿԱՐԳԻ ՀԱՂԹՈՒԹՅԱՆ

Յարական Ռուսաստանի տեխնիկական և կուլտուրական հետամնացությունը: Թույլ դարգացած արդյունաբերությունը և Փարզործարանային տեխնիկայի հետամնացությունը: Հողագործության գործիքները և աշխատանքի արտադրողականության խիստ ցած մակարդակը: Հողորդակցության և կապի միջոցների խիստ հետամնացությունը, ճանապարհազրկությունը: Յարական Ռուսաստանի կուլտուրական խիստ հետամնացությունը, բնակչության լայն մասսաների անգրագիտությունը:

Ռազմական ինտերվենցիայի Ռուսաստանի ժողովրդական տնտեսության պատճառած ավերածությունը:

Ինչպես բանվորներն ու գյուղացիները Լենինի ու Ստալինի ղեկավարությամբ մեր յերկիրը դուրս հանեցին քայքայված վիճակից և դարձրին արդյունաբերության և հողագործության առաջնակարգ տեխնիկայի յերկիր: Ժողովրդական տնտեսության վերականգնումը և նրա վերակառուցման նախապատրաստումը:

Յերկրի ինդուստրացման մեր կուսակցության գըլ-

խալոր գիծը: Յերկրի ինդուստրացիան հաջողութիւնները: ՍՍՀՄ-ի արդյունաբերական նոր հսկաները: Յերկրի ինդուստրացիան հիման վրա Կարմիր բանակի տեխնիկական զինվածութեան ուժեղացումը: Նոր կոմունալ շինարարութիւնը հանրապետական և Փարբործարանային կենտրոններում: Պրոլետարական մայրաքաղաքի շինարարութիւնը—Մոսկվայի մետրոն, Մոսկվայի վերակառուցման պլանը:

Ինդուստրացիան հաջողութիւնները և մեքենային խոշոր հողագործութեան ստեղծումը: Մեքենատրակտորային կայանները և խորհանտեսութիւնները: Ինչ դեր խաղացին ինդուստրացիան հաջողութիւնները գյուղատնտեսութեան վերակառուցման գործում: Մեծ բեկման տարին վորպես միջակի դեպի սոցիալիզմ վերջնական շրջադարձի տարի: Կոլտնտեսութիւնների շինարարութիւնը և կուրակութեան՝ վորպես դասակարգի՝ լիկվիդացիան համատարած կոլեկտիվացման հիման վրա: Կոլտնտեսային շարժման դժվարութիւնները: Կուսակցութեան նվաճումները կոլտնտեսութիւնների կադակերպական-տնտեսական և քաղաքական ամրապնդման գործում: Կոլտնտեսային ունեւոր կյանքի ստալինյան կանոնադրութեանը:

### ՌԻՅԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՊԻՍԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՄՎ ՍՈՑԻԱԼԻՋՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻՆ ՄԵՐ ՅԵՐԿՐՈՒՄ

Ինչից ելին յենում Լենինն ու Ստալինը, յերբ պաշտպանում ելին այն դրութիւնը, թի մենք կարող

ենք կառուցել և կկառուցենք սոցիալիզմ: Ստալինն ինչպես զարգացրեց և պաշտպանեց մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորութեան լենինյան ուսմունքը՝ պայքարելով տրոցկիզմի և տրոցկիստական —զինովյեյան խմբակի դեմ: Կուսակցութեան XV համագումարը և տրոցկիզմի ջախջախումը: Ինչի ելին ձգտում աջ ուղիներում և ում շահերն ելին նրանք արտացոլում: Ինչպես կուսակցութիւնն Ստալինի ղեկավարութեամբ հաղթահարեց և ջախջախեց աջ թեքումը: Կուսակցութեան XVI համագումարը աջ թեքման հայացքների անհամատեղելիութեան մասին համկ(բ)կ-ի մեջ մնալու հետ:

Սոսալին հնդամյակի համար մղվող պայքարում կուսակցութեան ձեռք բերած հաղթանակները: Կուսակցութեան XVII համագումարը վորպես հաղթողների և կուսակցութեան կողմից բոլոր հակալենինյան խմբավորումները ջախջախելու համագումար: Տրոցկիստական զինովյեյան ուղիներ, — յերկերեսանիւթիւնը վորպես կուսակցութեան դեմ պայքարելու սխտեմ և հիմնական մեթոդ. տրոցկիստական—զինովյեյան խմբակի վերածումն սպիտակ—դվարդիական տեւորիստները:

### ԻՆԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԻՆՉՈՎ Ե ՆԱ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԲՈՂՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՅ (ԻՆՉ Ե ՊՐՈՂԵՏԱՐԻԱՏԻ ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ)

Մեր պետութիւնը պրոլետարական դիկտատուրայի պետութիւն է: Պրոլետարական պետութիւնը զենք է

1) շահագործողներին ճնշելու, յերկիրը պաշտպանելու, մյուս յերկիրներէ պրօրէտարներէ հետ կապերն ամրացնելու, բոլոր յերկիրներում հեղափոխութեան դարգացման և հաղթանակի համար. 2) բանվորներէ և դուռաբացիներէ դաշինքն ամրապնդելու համար՝ ապահովելով այդ դաշինքում պրօլետարիատի ղեկավար դերը. 3) սոցիալիզմ կազմակերպելու, դասակարգելու վճռելու, անդասակարգ հասարակութեան, անպետութիւն հասարակութեան անցնելու համար:

Խորհուրդները վորպես պրօլետարական դիկտատուրայի որդաններ: Խորհուրդները վորպես ամենադեմոկրատիկ պետական կազմակերպութիւն, վորի միջոցով աշխատավորութեան միլիոնավոր մասսաներ ներգրավուած են յերկրի կառավարման մեջ և սովորում են յերկիր կառավարել:

Բուրժուական պետութեան մեջ իշխանութիւնը պատկանում է մի բուն կարիտալիստներէ, իսկ ժողովրդական մասսաները հեռացված են պետութեան կառավարմանը մասնակցելուց: Ինչպես բուրժուազիան պայքարում է բուրժուական դեմոկրատիայի ամեն տեսակի մնացորդներէ վերացման համար: Ֆաշիստական պետութիւնը վորպես ֆինանսական արքաներէ բացահայտ տեռորիստական դիկտատուրա:

Ինչպես է կառուցված խորհրդային պետութիւնը: Խորհուրդների համամիութենական համադրումարը—բարձրագույն իշխանութիւնն է մեր յերկրում: ԽՍՀՄ—սոցիալիզմի համար պայքարող խորհրդային հանրապետութիւնների կամավոր ինքնուրույն միութիւնն է: ԽՍՀՄ—ժողովուրդների համագործակցութիւնն և յեղափոխութիւնն է: Խորհրդային սահմա-

նապրութեան հիմունքները: Խորհուրդների VII համագումարի վորոշումները խորհրդային սահմանադրութեան մեջ փոփոխութեաններ մտցնելու մասին: Կարմիր բանակը—խիսկական ժողովրդական բանակը—պրօլետարական դիկտատուրայի բանակն է: Սոցիալիստական սեփականութիւնը—մեր կարգի հիմքն է: Դասակարգելու և դասակարգային բանակը ժամանակակից ետապում: Պրօլետարական պետութեան հզօրութեան արագանումը դասակարգելի վերացման և անդասակարգ, սոցիալիստական հասարակութեան կառուցման հիմնական պայմանն է: Ընկ. Ստալինը պրօլետարիատի դիկտատուրայի ամրապնդման անհրաժեշտութեան մասին: Կուսակցութիւնը պրօլետարիատի դիկտատուրայի ղեկավարող և ուղղութիւն տվող ուժն է:

99-18455

ՏԱՍՆԵՐՈՐԳ ԶՐՈՒՅՑ

ՅԵՐԿԻՐՈՐԴ ԼՆԳԱՄՅԱԿԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ

Յերկրորդ հնգամյակը վորպես անդասակարգ, սոցիալիստական հասարակութեան կառուցման հընգամյակ: Շահագործական դասակարգերի մնացորդներէ և դասակարգելու ճնող պատճառների վճռելուց մասն ինդիքը: Ինչ է նշանակում հաղթահարել կապիտալիզմի մնացորդներն եկոնոմիկայում և մարդկանց վրտակցութեան մեջ: Պայքար սոցիալիստական (հանրային) սեփականութեան նկատմամբ հողատար վերաբերմունք ցույց տալու համար: Պայքար աշխատանքի նկատմամբ սոցիալիստական վերաբերմունք ցուցաբերելու համար—դա պայքար է լողերի, պոկոյների և աշխատանքի իուսափելու դեմ, հալատարարման վը-



նասակար թերութիւն ու պրակտիկայի դեմ: Սոցիալիստական մրցակցութիւնը և հարվածայնութիւնը գերազանցելիներէ շարժումը: Աշխատանքի հերոսները նորհրդային Միութեան մեջ. պրոլետարական պետութեան կողմից նրանց հողատարութեամբ և սիրով շրջապատելը: Մեր հայրենիքի հանդեպ անձնուրաց նվիրվածութիւնն դասատարակելու խնդիրները: Պայքար մեծապետական շովինիզմի և տեղական նացիոնալիզմի մնացուկներէ դեմ:

Ժողովրդական ամբողջ տնտեսութեան տեխնիկական վերակառուցումը վորպես յերկրորդ հնդամյակի տընտեսական գլխավոր խնդիրը: Ինչ պետք է կառուցել յերկրորդ հնդամյակում: Գյուղատնտեսութեան զարգացումը: Տրանսպորտի աճումը: Ապրանքաշրջանառութեան զարգացումը: Բանվորներէ և գյուղացիներէ նյութական և կուլտուրական բարեկեցութեան վերելքը: Աշխատանքի արտադրողականութեան բարձրացումը, ինքնարժեքի իջեցումը, արտադրանքի վորակի բարելաւումը: Պրոլետարական դիկտատուրայի և ԽՍՀՄ-ի պաշտպանութեան հզորութեան հետագա ամրապնդման խնդիրները:

ՏԱՍԵՐԿՈՒՅԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԻՆՉ Ե ՍՈՑԻԱԼԻՉՄԸ, ԿՈՄՈՒՆԻՉՄԸ

Սոցիալիզմը— անդասակարգ հասարակութիւնը— կոմունիզմի առաջին փուլն է: Սոցիալիզմը— մի կարգ է, վորը թույլ չի տալիս ձրխակերութիւն, մի կարգ, վորի մեջ հասարակութեան բոլոր աշխատունակ անդամները պարտավոր են աշխատելու ըստ իրենց ընդունակութիւններէ: Սոցիալիզմի ժամանակ յուրա-

քանչյուր վոք ստանում է ըստ իր աշխատանքի քանակի և վորակի: «Յուրաքանչյուրից ըստ յուր ընդունակութիւններէ— յուրաքանչյուրին ըստ յուր աշխատանքի», — այս է սոցիալիզմի— կոմունիզմի առաջին փուլը— լոգունգը: Վորն է ուսուցիտն հավասարաման վտանգը և ինչու անհրաժեշտ է պայքարել նրա դեմ: Պրոլետարական դիկտատուրայի պետական հզորութեան բարձրագույն փուլը— լիակատար կոմունիզմը— ժամանակաշրջանում: Կոմունիստական հասարակութեան բարձրագույն փուլը— լիակատար կոմունիզմը— աճում է իր ստորին փուլից: Կոմունիզմի բարձրագույն փուլի հիմնական գծերը, — արտադրողական ուժերի հետագա ուժեղ զարգացումը. քաղաքի և գյուղի միջև յեղած հակադրութեան լիակատար վոչնչացումը. մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև յեղած հակադրութեան վոչնչացումը և հասարակութեան զասակարգային բաժանման մնացորդներէ վոչնչացումը: Պետութեան մահացումը լիակատար կոմունիզմի ժամանակ: «Յուրաքանչյուրից ըստ յուր ընդունակութեան— յուրաքանչյուրին ըստ յուր պահանջի» — այս է կոմունիզմի բարձրագույն փուլի լոգունգը:

ՏԱՍԵՐԿՈՒՅԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ Ե ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏ-  
ՊԱՆՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍԻ  
ՓՈՒՑԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆՆԵՐ ՈՒՐԻՇ ՊԵ-  
ՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ինչու կապիտալիզմի ժամանակ անխուսափելի յեն պատերազմները: Համաշխարհային պատերազմի ա-

ճող վտանգը: Պատերազմի այդ վտանգը ծնող և ու-  
ժեղացնող պատճառները: Նրա գլխավոր հրձիգները—  
դերմանական Փաշլոզը և ճապոնական իմպերիալիզմն  
են: Ընկեր Ստալինը բուրժուազիայի շրջաններում  
մամաացվող պատերազմի չորս ծրագրերի մասին:  
Մեր պայքարն ընդդեմ պատերազմի վտանգի, և խա-  
ղաղության հետևողական քաղաքականությունը:  
ԽՍՀՄ-ի Ազգերի Լիգայի մեջ մտնելը: Մեր կողմից  
չհարձակման պահտեր կնքելը: Ինչու մենք համա-  
ձայնվեցինք վաճառել ՉՍՀ-ն (Չին-Արևելյան յերկա-  
թուղին): Ինչ ասաց Կոմինտերնի VII կոնգրեսը հա-  
մաշխարհային սպանդը կանխելու մասին: Կոմինտեր-  
նի VII կոնգրեսը պատերազմի դեմ պայքարելու հա-  
մար միասնական ճակատ ստեղծելու մասին: Կոմին-  
տերնի VII կոնգրեսն այն ժողովուրդների աղբյուրն  
անկախությունը պաշտպանելու մասին, վերսնց պա-  
տերազմն սպառնում և ստրկացնել: Խորհուրդների  
յերկրի դեմ պատերազմի վտանգը և հարձակումից  
պաշտպանվելու համար պատրաստ լինելու մեր խրն-  
դերները: Մեր հարազատ, խեղճական ժողովրդական  
Կարմիր բանակի մարտունակության հետագա ամրա-  
պնդման խնդիրները: Կարմիր բանակի հրամանատար-  
ների համար զինվորական կոչումներ մտցնելու մա-  
սին կենսագործելու և ԺԿՍ-ի վերջման նշանակու-  
թյունը: Հայրենիքի պաշտպանությունը—ԽՍՀՄ-ի  
յուրաքանչյուր քաղաքացու առաջնապույն պարտակա-  
նությունն և: Կոմինտերնի VII կոնգրեսի կողմից կո-  
մունիստական կուսակցությունների առաջ գլխավոր  
գլխավոր խնդիրը—գա պատերազմի դեմ մղվող պայ-  
քարն և ի պաշտպանություն ԽՍՀՄ-ի:

## ՅԵՐԿՐՈՐԴ ՎԱՐԻԱՆՏ

ԱՌԱՋԻՆ ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԱՊՐՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒՂԱ-  
ՅԻՆԵՐԸ ՅԱՐԻՉՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԱՊ-  
ՐՈՒՄ ԱՅԺՄ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՅԵՐԿԻՐՆԵՐՈՒՄ

Աշխատանքային ուրվա յերկարությունը ցարական  
Ռուսաստանում: Աղքատիկ աշխատավարձը և մշտա-  
կան նվազեցումները: Տուգանքները և նրանց չափե-  
րը: Ճար-գործարանային աղմինխտրացիայի անաս-  
ման կամայականությունը: Ճարքիկատերերի և գոր-  
ծարանատերերի անինա վերաբերմուքը բանվորի ա-  
նողջության և կյանքի նկատմամբ: Բանվորական ու-  
րենադրությունը ցարական Ռուսաստանում: Ճարական  
որենքները գործադուլների դեմ և դազանական հաշ-  
վեհարարը գործադուլավորների հետ: Գործադրկու-  
թյունը: Բանվորի կենցաղը: Բանվորուհու առանձնա-  
պես ծանր դրությունն արտադրության մեջ և կեն-  
ցաղում (կանանց աշխատանքի համար իջեցրած դնա-  
հատումներ, բանվորուհու դրությունն ընտանիքում):

Բանվորները քաղաքական իրավազրկութիւնը ցարական Ռուսաստանում :

Աշխատավոր գյուղացիութեան կիսաճորտական դժբախտութիւնը : Հողի բաշխումը ցարելովի ժամանակ, — կարվածատիրական հողամասերը, յեկեղեցական և վանական հողերը, թաղավորական տան հողային տիրակալութիւնները : Գյուղական կուլակները : Գյուղական պրոլետարները և կիսավրոլետարները : Միջակ գյուղացիութեան դրութիւնը : Կալվածատիրոջ ու կուլակի ճնշումը : Յարական հարկերը, դանձումները, տուրքերը : Մանր և միջակ գյուղացիական տնտեսութիւնների քայքայումը : Յարական կառավարութիւնն ինչպէս եր մթութեան ու խաւարի մեջ պահում ժողովրդական մասսաներին : Գեղջկուհու դրութիւնը :

Յարական ինքնակալութեան րազգային կեղեքողական քաղաքականութիւնը : Յարական Ռուսաստանը — ժողովուրդների բանա :

Բանվորները և աշխատավոր գյուղացիութեան ներկայիս դրութիւնը կապիտալիզմի յերկիրներում : Բանվորների կենսական մակարդակի մշտական անկումը և միշտ աճող դործազրկութիւնը : Ռացիոնարացման կապիտալիստական մեթոդները և բանվորի կյանքի քայքայումը : Գաղութային ստրուկների աշխատանքի վոչ մարդկային պայմանները : Յերեկայի որդանիովի քայքայումը վաղաժամ և ուժից վեր աշխատանքում : Չքավոր և միջակ գյուղացիութեան հիմնական մասսաների արագ քայքայումը : Բանվորների և գյուղացիների առանձնապէս ծանր դրութիւնը Ֆաշիզմի յերկիրներում : Բանվորների աղքատիկ կենսամակարդակ

կը և հարկադիր ստրկական աշխատանքը .. (Գերմանիա) : Աշխատավոր գյուղացիութեան աննախընթաց ստրկացումը, բատրակին կիսաճորտ դարձնելը, («գյուղացու կյանքի պայմանները միջնադարի մակարդակին հասցնելը (Գերմանիա, Ահաստան) : Բանվորների և աշխատավորների հետ հաշիվհարդարի աննախընթաց դազանային մեթոդները Ֆաշիզմի յերկիրներում : Ֆաշիզմը վորպէս կապիտալի անողոքագոյն հարձակումն աշխատավոր մասսաների վրա, վորպէս բանվոր դասակարգի և բոլոր աշխատավորների սամեալութեան թշնամի :

ՅԵՐԿՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԼԵՆԻՆՆ ՈՒ ՍՏԱԼԻՆԸ ՎՈՐՊԵՍ ՄԵՐ ԿՈՒՍԱԿՑՈՒ-  
ԹՅԱՆ ՅԵՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԻԶՆԵՐ  
ՈՒ ԱՌԱՋՆՈՐԳՆԵՐ

Լենինը և Ստալինը համաշխարհային պրոլետարիատի և բոլոր աշխատավորների մեծագույն առաջնորդներն են : Լենինն ու Ստալինը Մարքսի և Ենգելսի գործի շարունակողներն են : Լենինի կյանքը — բանվոր դասակարգի դործի համար անձնուրաց պայքարով լի կյանք է : Ինչպէս ցարական յենիշարիները և բուրժուազիայի վարձկանները հարածում ետին Լենինին :

Լենինը վորպէս բողջեիկները կուսակցութեան հիմնադիր : Վորպիսի թշնամիները դեմ մղվող պայքարում Լենինը կառուցեց իր կուսակցութիւնը, ստեղծեց նրա ծրագիրը, նրա տակտիկան, աճեցրեց նրա կազմը : Լենինը վորպէս Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխութեան ներշնչողն ու առաջնոր-

դը: Մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարափո-  
րութեան լենինյան ուսմունքը: Լենինի պայքարը հե-  
զափոխական բանվորներին միջազգային միութեան հա-  
մար, — Կոմունիստական Ինտերնացիոնալ հիմնելը:  
Ընկ. Ստալինը Լենինի մասին:

Ընկեր Ստալինը վորպես Լենինի ամենամոտիկ դի-  
նակիցը և նրա դործը շարունակողը: Ընկեր Ստալինն  
ինչպես պաշտպանեց Լենինի ուսմունքը լենինիզմի  
թշնամիների դեմ մղվող պայքարում և ե՛լ ավելի դար-  
պացրեց այդ ուսմունքը: Ընկեր Ստալինի կյանքի ու-  
ղին ցարական ընդհատակում, — դա հերոսական պայ-  
քարով լի ուղի յե ցարիզմի և կապիտալիստների դեմ՝  
բանվոր դասակարգի դործի համար: Յարական պահ-  
նորգական բաժնի կողմից ընկեր Ստալինին հարածելը:  
Ձերբակալությունները, աքսորումները, բանտը, փա-  
խուսաները: Ընկեր Ստալինի հեղափոխական աշխա-  
տանքն Սնդրկովկասում և նրա կոլմից մեր կուսակ-  
ցութեան խոչորապույն կազմակերպութեան ստեղծու-  
մը: Ստալինի առաջին ծանոթութեանը Լենինի հետ:  
Ստալինի պայքարը բուլչեիզմի թշնամիների դեմ՝ ընդ-  
հատակի շրջանում: Ինչպես եր ընկեր Ստալինը բոլ-  
չեիկյան կադրեր անցնում ընդհատակում: Ընկեր  
Ստալինի դերը Հոկտեմբերյան սոցիալիստական հե-  
զափոխության հաղթանակի կազմակերպման մեջ:  
Ընկեր Ստալինը — հաղթանակների կազմակերպիչ ըս-  
տապատեմական պատերազմի բոլոր վճռողական ճակատ-  
ներում: Ընկեր Ստալինը — մեր յերկրում սոցիալիզմի  
հաղթանակի ներշնչողն ու կազմակերպիչը: Ինչպես և  
ընկ. Ստալինը դաստիարակում սոցիալիզմ կառուցող-  
ներին, մեր հայրենիքի հերոսներին: Ընկեր Ստալինը

վորպես համաշխարհային կոմունիստական շարժման  
առաջնորդը, Կոմունիստական Ինտերնացիոնալի ա-  
ռաջնորդը:

ՅԵՐՐՈՐԳ ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՅՎԱԾ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿ-  
ՑՈՒԹՅՈՒՆԸ. ՎՈՐՈՆՔ ԵՆ ԿՈՄՈՒՆԻՍՏՆԵՐԻ  
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոմունիստական կուսակցությունը — պրոլետարիատի  
առաջավոր ավանգարդն է, նրա ամենից ավելի դիտա-  
կից, ամենից ավելի փորձված մասը, վոր դիտե,  
ինչպես վարել դործը, և մասսաներին ցույց է տալիս  
նրանց պայքարի ճիշտ ուղիները:

Կոմունիստական կուսակցութեան առանձնահատկու-  
թյունները, վորոնք նրան ընդունակ են դարձնում  
հաղթանակի առաջնորդել պրոլետարիատին: Կոմու-  
նիստական կուսակցությունը Մարքսիզմ — Լենինիզմի  
թեորիայով սպասարկնված կուսակցություն է:  
Հետևողական կայուն դասակարգային դիժը, վորը  
փոշ մի բանում չի հաշտվում պրոլետարիատի թշնա-  
միների հետ, անուրք պայքարը բանվոր դասակարգի  
մեջ և կուսակցութեան շարքերում յեղած դասակար-  
գայնորեն թշնամի դործակալութեան հետ, Լենինյան  
զժից յեղած թեքումների հետ, դիտակցական խոտա-  
պույն կարգապահությունը, կուսակցութեան մեջ, նրա  
շարքերի յերկաթյա գողվածությունը, նրանում  
Ֆրակցիաներ ու խմբավորումներ թույլ չառը, ան-  
դուլ ինքնաքննադատությունը և պայքարի միջոցով

ամեն տեսակի ուղորտունիստական տատանումներէ հաղթահարումը—այս բոլորը մեր կուսակցութեան հաղթանակներէ կարեւորագուտն աղբյուրն են: Կուսակցութեան անդամների մեջ հեղափոխական արիութիւն, հերոսութիւն և անձնուրացութիւն դաստիարակելը:

Ինչպես է կառուցված մեր կուսակցութիւնը: Համախիտութեան կոմունիստական (բոլշեիկներէ) կուսակցութիւնը—Կոմունիստական Ինտերնացիոնալի սեկցիան է:

Գեմոկրատական ցենտրալիզմը — կուսակցութեան կազմակերպական կառուցման ղեկավար սկզբունքն է. ինչ է նշանակում այդ սկզբունքը: Կուսակցութեան կառուցման տերիտորիալ—արտադրական հատկանիշը: Կուսակցութեան կենտրոնական կազմակերպութիւններ, — Կենտրոնական կոմիտեն, Կենտկոմի քաղբյուրոն և նրա կազմը. Կենտկոմի Կազմբյուրոն կուսակցութեան Կենտրոնական Կոմիտեյի քարտուղարները. Կուսակցական վերահսկողութեան հանձնաժողովը: Կուսակցութեան յերկրամասային, մարզային, հանրապետական կազմակերպութիւնները: Սկզբնական կուսակցական կազմակերպութիւնը: Կարմիր բանակի կուսակազմակերպութիւնը: Կուսակցական խմբակներ արտակուսակցական կազմակերպութիւններում:

Ով կարող է լինել կուսակցութեան անդամ: Ինչ պարտականութիւններ են սահմանված նրա համար կուսակցութեան XVII համագումարում ընդունված կանոնադրութեամբ: Կուսակցութեան մեջ անդամ ընդունելու կարգը: Թեկնածու ընդունելու կարգը և թեկնածվական ստափի նշանակումը: Համակրողների խմբակները:

Ինչպես է կուսակցութիւնը պայքարում իր շարքերէ մաքրութեան համար: Կուսակցական կազմակերպութիւնների կուսակցական դաստիարակչական աշխատանքը: Պայքար կուսակցութեան բոլոր ողակներում իրիտողական աշխատանքն ուժեղացնելու համար: Կուսակցութեան անդամների կողմից կուսակցութեան պատմութեան ուսումնասիրութեան առանձնահատուկ կարեւորութիւնը: Կուսակցութեան պայքարն իր շարքերը, խորթ տարրեր, խաբեբաներ, այլասերվածներ ու յերկերեսանիւններ ներթափացելու դեմ: Կուսակցական վաւատաթղթերի ստուգումը: Կուսակցական կանոնադրութիւնը խաղտողների նկատմամբ կանոնադրութեան նախատեսած տուժի միջոցները: Կուսակցութեան կանոնադրութիւնը կոմունիստի պարտականութիւնների մասին:

ՁՈՐՈՐԳ ԶՐՈՒՅՑ

### ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐՆ ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ՅԱՐԻՉՄԻ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՉՄԻ ԴԵՄ

Գործադուլների, գյուղացիական պատմութիւնների ալիքը 900-ական թվականների սկզբին: Զինված ուժով ինքնակալութիւնը տապալելու, բանվորների և գյուղացիների իշխանութիւն նվաճելու, ու այնուհետև պրոլետարիատի ղեկտատուրա նվաճելու լենինյան գիծը: 1905-1907 թ.թ. հեղափոխութեան մեջ լենինյան այդ գիծի համար մենչևիկների և Տրոյսկու դեմ մղվող պայքարը: Գյուղացիութեան համար բոլշեիկների պայքարն Եսերների դեմ: Բոլշեիկների պայ-

քարք հանուն մասսայական կուսակցութեան ընդդէմ անհատական տեղորի:

Կուսակցութեան աշխատանքը բանակում և նախատորմում: Ապստամբութեան «սրտեմկին» զրահանախում: Բոլշևիկները Լենինի գլխավորութեամբ վորպես 1905 թվի հեղափոխական պայքարի ղեկավարները: Անդրկովկասյան բոլշևիկները պայքարն ընկեր Ստալինի ղեկավարութեամբ:

1905 թվի հոկտեմբերի ընդհանուր քաղաքական գործադուլի կազմակերպումը բոլշևիկների կողմից: Բոլշևիկների գործնական աշխատանքը ղինված ապրտամբութեան կազմակերպելու համար, — գենը ձեռք բերելը և բանվորներին գենը մատակարարելը, հատուկ մարտական խմբերի ստեղծումը: Բոլշևիկների աշխատանքը բանվորական պատգամավորները խորհուրդները սպտամբութեան որդաններ զարձնելու համար: Դեկտեմբերյան ղինված սպտամբութեանը Մտեկվալում և ղբան հաջորդած սպտամբութեանները մի շարք խոչորագույն բանվորական կենտրոններում:

Բոլշևիկյան կուսակցութեան աշխատանքը ոեակցիայի և հեղափոխական նոր վերելքի շրջանում: Բոլշևիկների աշխատանքն իմպերիալիստական պատերազմի շրջանում. իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու նրանց լողունը: Բոլշևիկների կուսակցութեան ղերը 1917 թվի փետրվարյան հեղափոխութեան մեջ: Բոլշևիկյան պրոպագանդը գորքի մեջ և ղորքի անցումը սպտամբած բանվորների կողմը: Բոլշևիկների մասսայական աշխատանքը ֆար-

բիկներում և գործարաններում և բոլշևիկների ղեկավար ղերն ինքնակալութեան տապալման մեջ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՑԻՆ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵՇ ՀԵՂԱՓՈՒՌՆԻԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ

Ինքնակալութեան տապալումը: Յերկիշխանութեան առաջացումը, — Ժամանակավոր կառավարութեանը և բանվորների, գինվորների և ղյուզացիների պատգամավորների Սորհուրդները: Յերկիշխանութեան պատճառները: Լենինի վերադարձն արտասահմանից: Լենինի ապրիլյան թեզիսները: Բոլշևիկների պայքարը մասսայի համար, — նրանց ծափալած բացատրական աշխատանքը, վորը մերկացնում եր մենշևիկները և եսերների ղավաճանական քաղաքականութեանը: Սպրիլյան ցույցը: Հունիսյան ցույցը բոլշևիկները ղեկավարութեամբ և լողուններով: Ինչպես հակահեղափոխական բուրժուազիան, մենշևիկների ու եսերների սղնութեամբ, ճնշեց հուլիսյան ցույցը:

Լենինին ձերբակալելու հրամանը և Լենինի ընդհատակյա գործունեութեան անցնելը: Կուսակցութեանը կիսալեզալ ղերութեան մեջ: Ընկեր Ստալինի անմիջական ղեկավարութեամբ աշխատող կուսակցութեան VI համագումարի վորուձմենքը: «Սեբրոջ իշխանութեանը խորհուրդներին» լողունը Ժամանակավորապես հանելու պատճառները: Բոլշևիկների ուժեղացումը աշխատանքը և նրանց կողմից մատաներին մո-

քիլիզացիա անելը՝ հակահեղափոխութեան դեմ պայ-  
քարելու համար: Կորնիլովականութեան ջախջախումը:  
Քոլչեկիկներէ աճումը խորհուրդներում: «Ամբողջ իշ-  
խանութեանը խորհուրդներին» լոգոնդի վերստին ա-  
ռաջընթացումը,—ինչ եր նշանակուեալ այլ լոգոնդն այն  
պայմաններում, յերբ խորհուրդներն անցնում եյին  
քոլչեկիկներէ ձեռքը: Զինված ապստամբութեան նա-  
խապատրաստումը քոլչեկիկներէ կողմից: Կամենիվի և  
Զինովյեվի դավաճանական դերը: Լենինը և Ստալին-  
ը—զինված ապստամբութեան կազմակերպիչներն ու  
դեկավարները: Ինչպես Ռուսաստանի բանվոր դատա-  
կարգը, քոլչեկիկներէ կուսակցութեան ղեկավարու-  
թյամբ, չքալորագուին գյուղացիութեան պաշտպա-  
նութեան պայմաններում, նոյեմբերի 7-ին (հոկտեմ-  
բերի 25-ին) տասպալեց կապիտալիստներէ և կալվա-  
ժատերերէ իշխանութեանը և պրոլետարիատի գլխ-  
տատուբա հաստատեց:

ՎԵՅԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԵՅԻՆ ԽՈՐ-  
ՀԸՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԻՆ ՅԵՎ ԱՐՏԱ-  
ՔԻՆ ՀԱԿԱՀԵՂԱՓՈՒՅՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱ-  
ՐՈՒՄ

Լենինն ու Ստալինը վորպես հաղթանակներէ կազ-  
մակերպիչներ քաղաքացիական պատերազմի ճակատ-  
ներում:

Տասպալած շահագործողներէ զինված ընդդիմող-  
ութեանը խորհրդային իշխանութեանը՝ արտասահ-

մանյան կապիտալիստներէ ակտիվ ոգնութեամբ: Զե-  
խտալովակներէ և սպիտակ դավաճանականներէ միաց-  
յալ զորհը 1918 թվի ամռան: Սպիտակներէ՝ Յարի-  
ցինը դրաւելու փորձը (1918 թվի աշնանը) և դրա  
լիկվիզացիան՝ ընկերներ Ստալինի ու Վորոշիլովի ղե-  
կավարութեամբ: Յարիցինը սպիտակներէ համար ա-  
նտուի բարյեր դարձնելը: Արևելյան Փրոնտը (կոլչա-  
կովյան) հյուսիսային Փրոնտի հետ միացնելու սպի-  
տակներէ ձգտման լիկվիզացիան ընկեր Ստալինի ղե-  
կավարութեամբ: Անտանտի յերեք արշավանքները:  
Առաջին արշավանքը 1919 թվի գարնանը (Կոլչակ):  
Կոլչակի ջախջախումը համաձայն կուսակցութեան  
կենտրոնի պլանի, վորն ընդունվել եր հակառակ  
Տրոցկու պլանի: Անտանտի յերկրորդ արշավանքը  
1919 թվի աշնան (Դենիկին, Յուդենիչ, սպիտակ-լե-  
հեր): Դենիկինի ջախջախումն ընկ. Ստալինի պլա-  
նով, վորը հաստատվել եր Լենինի կողմից և առաջա-  
քրվել է հակակշիռ Տրոցկու պլանի: Անտանտի յեր-  
րորդ արշավանքը 1920 թվի ամռանը (Լեհաստան և  
Վրանդել): Ընկեր Ստալինը վորպես հարավ-արևմուտ-  
յան ճակատի ղեկավարը և հարաւային, հակավրան-  
գելյան ճակատի կազմակերպիչը:

Բանվորներէ և գյուղացիներէ հերոսութեանը քա-  
ղաքացիական պատերազմում: Պրոլետարիատի և գյու-  
ղացիութեան դաշինքի ճիշտ քաղաքականութեանը,  
Լենինյան-Ստալինյան ազդեցին քաղաքականութեանը,  
միջազգային պրոլետարիատի ոգնութեանը և խորհրդ-  
դային պետութեան խաղաղութեան քաղաքականու-  
թեանը—զինված դատակարգային թշնամու վրա տա-  
քած հաղթանակներէ պատճառներն են: Ռազմական

կամ խարների դերը: «Մեր հաղթանակների կազմակերպչի բարձր պատիվը... պատկանում է մեր յերկիրն առաջավոր բանվորների մեծ կոլեկտիվին—Ռուսաստանյան կոմունիստական կուսակցությանը» (Ստալին):

ՅՈՒՅԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ԻՆՉՊԵՍ ԲՈՒՇԵՎԻԿՆԵՐԸ ԿԱՐՈՂԱՑԱՆ ԽՍՀՄ-Ն  
ԴԱՐՁՆԵԼ ԱՌԱՋԱՎՈՐ ԻՆԴՈՒՍՏՐԻԱԼ ՅԵՐԿԻՐ

Յարական Ռուսաստանի տեխնիկական և կուլտուրական հետամնացությունը: Թույլ զարգացած արդյունաբերությունը և Փար-գործարանային տեխնիկայի հետամնացությունը: Հազարամյակների զործիքները և աշխատանքի արատըրողականության խիստ ցածր մակարակը: Հազարակցություն և կապի միջոցների ծայրահեղ հետամնացությունը,— ճանապարհազգրվությունը: Յարական Ռուսաստանի կուլտուրական ծայրահեղ հետամնացությունը. բնակչության լայն մասաների անգրագիտությունը:

Պատերազմի և ինտերվենյիայի պատճառած ավերմունքը Ռուսաստանի ժողովրդական տնտեսությունը:

Ինչպես բանվորները և գյուղացիները, Լենինի և Ստալինի ղեկավարությունը, մեր յերկիրը դուրս հանեցին քայքայումից և այն զարձրին արդյունաբերություն ու հողագործություն առաջնակարգ տեխնիկայի յերկիր: Ժողովրդական տնտեսություն վերականգնումը և նրա վերակառուցման նախապատրաստումը:

Յերկիրն ինդուստրացնելու մեր կուսակցության դրվապայոր գիծը:

Յերկիրն ինդուստրացնելու կուսակցության քաղա-

քականություն պատճառները: Առաջին հնդամյակի շրջանում արդյունաբերություն զարգացման առավելազույն արագ տեմպի քաղաքականություն պատճառը: Այն դժվարությունները, վորոնք հարկ յեղալ հաղթահարել յերկիրն ինդուստրացնելու ինդիրն իրադործելիս (արտաքին ֆինանսական ոգնություն բացակայությունը, դասակարգային թշնամու և կուսակցություն մեջ նրա զործակալություն—աջ թեքման և տրոցկիզմի—ընդդիմադրությունը):

Յերկրի ինդուստրացման հիման վրա կուսակցության տարած հաղթանակները: Սև մետաղաձուլություն, տրակտորային և ավտոմոբիլային արդյունաբերություն, դաղդյահաչինություն, լուրջ և ժամանակակից քիմիական արդյունաբերություն, ժամանակակից գյուղատնտեսական մեքենաներ արտադրելու լուրջ արդյունաբերություն և ավիացիոն արդյունաբերություն ստեղծումը:

Յերկրի ինդուստրացման հիման վրա կարմիր բանակի տեխնիկական սարքի հզոր ամրացումը: Նոր կոմունալ շինարարությունը հանրապետական և Փարգործարանային կենտրոններում: Պրոլետարական մայրաքաղաքի շինարարությունը,— Մոսկվայի մետրոն, Մոսկվայի վերակառուցման պլանը: Ինդուստրացման հաջողությունների հիման վրա ԽՍՀՄ-ի աշխատավորություն նյութական և կուլտուրական բարեկեցություն աճումը: Գործադրվելու վերացումը: Ազգային ծայրամասերի նյութական վերելքը:

ԻՆՉՊԵՍ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԸ ԿՈԼԵԿՏԻՎԱՅՐԻՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԳՅՈՒՂԸ

Կոլտնտեսությունների ուղին—միակ ճիշտ ուղին է: Այն նախնական պայմանները, վորոնք անհրաժեշտ էին, վորպեսզի սկսվեր մասսայական կոլտնտեսային շարժումը: Ինչպես մեր կուսակցությունը, Լենինի և Ստալինի գլխավորությամբ, ստեղծում էր այդ պայմանները: Ինդուստրացիան հաջողությունները և մեքենային խոշոր հողագործության ստեղծումը: Խորհրատնտեսությունների, ՄՏԿայանների ստեղծումը: Գյուղատնտեսության տակ մեքենային բազա անցկացնելը: XV կուսակցական համագումարը վորպես կոլեկտիվացման համադրումար: Մեծ բեկման տարին վորպես միջակի վերջնականապես սոցիալիզմի կողմը շրջվելու տարի: Մեր կուսակցության պայքարն աջ թեքման—կոլեկտիվացման թշնամու դեմ: Կուսակցության կողմից «ձախ» խոտորոզների քաղաքականության խափանումը, «ձախեր», վորոնք խախտում էին լենինյան գիծը՝ կոլտնտեսային շինարարության խնդիրների բուժման մեջ: Կոլտնտեսությունների շինարարությունը և կուլակության վորպես դասակարգի՝ լիկվիդացիան համատարած կոլեկտիվացման հիման վրա: Կոլտնտեսային շարժման դժվարությունները: Մեր կուսակցությունն ինչպես է պայքարել և պայքարում է կոլտնտեսությունների կադմակերպական—տնտեսական և քաղաքական ամրապնդման համար: Ինչ դեր խաղացին այդ բանում քաղբաժինները:

Կոլտնտեսային կարգի վերջնական և անվերադարձ

հաղթանակը: Սոցիալիզմի լիակատար հաղթանակը քաղաքում և գյուղում: Մեկ, առանձին վերցրած յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորություն մասին Լենինի և Ստալինի ուսմունքի մարմնավորումը կյանքում:

Ինչից ելին յերնում Լենինն ու Ստալինը, յերբ պաշտպանում էին այն դրույթը, թե մենք կարող ենք կառուցել և կկառուցենք սոցիալիզմ: Մեր յերկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության մասին լենինյան ուսմունքն Ստալինն ինչպես զարգացրեց և պաշտպանեց տրոցկիզմի և տրոցկիստական—գլխավորյան խմբակի դեմ միվող պայքարում:

Տրոցկիստական—գլխավորյան ուղիքային ուղին,— յերկերեսանիությունը վորպես կուսակցության դեմ նրա մղած պայքարի սիստեմը և հիմնական մեթոդը: Տրոցկիստական—գլխավորյան խմբակի ապիտակ—գվարդիական տեռորիստների վերածվելը:

ԿՈԼՏԵՏԵՍԱՅԻՆ ԱՐՏԵԼԻ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեր կուսակցության առաջնորդ ընկեր Ստալինի լուրջուղը—կոլտնտեսությունները դարձնել բոլշևիկյան և կոլտնտեսականներին՝ ունևոր: Կոլտնտեսականների համամիութենական II համագումարի ընդունած գյուղատնտեսական արտելի ստալինյան կանոնադրությունը: Գյուղատնտեսական արտելի ամրապնդումը վորպես տվյալ հտապում կոլտնտեսային շարժման

ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՊԵՏՈՒ-  
ԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԻՆՉՈՎ, Ե ՆԱ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ԲՈՂՈՐ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ (ԻՆՉ Ե ՊՐՈՒԵՏԱՐԻԱՏԻ  
ԴԻԿՏԱՏՈՒՐԱՆ)

Մեր պետութիւնը—պրոլետարական դիկտատուրայի  
պետութիւնն է: Պրոլետարական պետութիւնը զենք  
է,—1) շահագործողներին ճնշելու, յերկիրը պաշտպա-  
նելու, մյուս յերկիրներէ պրոլետարներէ հետ կապերն  
ամրապնդելու, բոլոր յերկիրներում հեղափոխութեան  
հաղթանակի և զարգացման համար: 2) քանվորներէ և  
գյուղացիներէ դաշինքն ամրապնդելու համար՝ այդ  
դաշինքում ապահովելով պրոլետարիատի զեկազար  
դերը: 3) սոցիալիզմ կադմակերպելու, դասակարգերը  
վոչնչացնելու, անդասակարգ հասարակութեան, ան-  
պետութիւնն հասարակութեան անցնելու համար:

Սորհուրդները վորպես պրոլետարական դիկտատու-  
րայի որդաններ: Սորհուրդները վորպես ամենադե-  
մոկրատիկ պետական կազմակերպութիւն, վորի մի-  
ջոցով աշխատավորութեան միլիոնավոր մասսաներ  
յերկրի կառավարման մեջ են ներգրավուած և կառա-  
վարել են սովորում:

Բուրժուական պետութեան մեջ իշխանութիւնը  
պատկանում է մի բուն կապիտալիստներէ, իսկ ժո-  
ղովրդական մասսաները հեռացված են պետութեան  
կառավարմանը մասնակցելուց: Ինչպես է բուրժուա-  
կան պայքարում բուրժուական դեմոկրատիայի ամեն  
տեսակի մնացորդները վերացնելու համար: Չաչխ-

միակ ճիշտ ձևը: Նոր կանոնադրութիւնը—կոլտնտե-  
սականի հանրային շահի լավագոյն զուգորդումն է  
նրա անձնական շահի հետ: Կանոնադրութեան յերկ-  
րորդ կետի նշանակութիւնը, վորով համաժողովրդա-  
կան պետական սեփականութիւնն հանդիսացող հողն  
անժամկետ ուտագործման համար, այսինքն «սուհա-  
վետ» ամրացվում է արտելին: Նոր կանոնադրութիւ-  
նը—գյուղացիութեան բազմամիլիոն մասսաների՝ հան-  
րային (սոցիալիստական) սեփականութեան սկզբունք-  
ներէ կողմն անցնելու փայլուն արտահայտութիւնն է:  
Նոր կանոնադրութիւնը հանրային սեփականութեան  
պահպանման մասին և կոլտնտեսութիւններէ ու կոլ-  
տնտեսականներէ կողմից պրոլետարական պետութեան  
հանդէպ իրենց պարտավորութիւնները կատարելու  
մասին: Նոր կանոնադրութիւնը—կոլտնտեսականներէ  
ակտիվութեան և ստեղծագործական նախաձեռնութեան  
մոբիլիզացիայի զենքն է: Կանոնադրութեան մեջ կոլ-  
տնտեսուհուն դարձված առանձնահատուկ ուշադրու-  
թիւնը—ապահովում է նրա լայն և ակտիվ մասնակ-  
ցութիւնը կոլտնտեսութեան հանրային կյանքում և  
նրա կենցաղի հետագա բարելավումը: Կանոնադրու-  
թեան ճշգրտումը համաձայն յուրաքանչյուր կոլտնտե-  
սութեան պայմաններէ: Մեր կուսակցութեան և կա-  
ռավարութեան պայքարը գյուղատնտեսական արտելի  
որինակելի կանոնադրութեան խախտումներէ դեմ:  
Գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրութեան  
հիման վրա կոլտնտեսութիւններէ ձեռք բերած հա-  
ջողութիւնները:

տական պետութիւնը—Ֆինանսական արքաների բա-  
ցահայտ տեւորիստական զիկտատուրա յէ :

Ինչպէս է կառուցված Խորհրդային պետութիւնը :  
Խորհուրդները համամիութենական համագումարը բար-  
ձրագոյն իշխանութիւնն է մեր յերկրում : ԽՍՀՄ-ն—  
սոցիալիզմի համար պայքարող խորհրդային ինքնու-  
րոյն հանրապետութիւնները կամալոր միութիւնն է :  
ԽՍՀՄ-ն—ժողովուրդների դործակցութիւնն է յեղ-  
բայրութիւնն է : Խորհրդային Սահմանադրութիւն  
հիմունքները : Խորհուրդները VII համագումարի վորո-  
շումները խորհրդային Սահմանադրութիւն մեջ վտիո-  
խութիւններ մտցնելու մասին : Կարմիր բանակը—իս-  
կական ժողովրդական բանակ է, պրոլետարական զիկ-  
տատուրայի բանակ : Սոցիալիստական սեփականու-  
թիւնը մեր կարգի հիմքն է : Դասակարգերը և դա-  
սակարգային պայքարը ներկա ետապում : Պրոլետա-  
րական պետութիւն հզորութիւնն ամրապնդումը—դա-  
սակարգերի վերացման և անդասակարգ, սոցիալիստա-  
կան հասարակութիւն ստեղծելու հիմնական պայմանն  
է : Ընկեր Ստալինը պրոլետարիատի զիկտատուրայի  
ամրապնդման անհրաժեշտութիւնն մասին : Կուսակցու-  
թիւնը վորպէս պրոլետարիատի զիկտատուրայի ղե-  
կավար և ուղղութիւն սլող ուժը :

ՏԱՍԵՆԿՅԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ՅԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԸ ՎՈՐՊԵՍ ԱՆԿԱՍԱԿԱՐԳ  
ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ  
ՀՆԳԱՄՅԱԿ

Յերկրորդ հնգամյակի քաղաքական հիմնական  
խնդիրը—կապիտալիստական տարրերի և ընդհանրապես

դասակարգերի վերջնական լիկվիդացիան է, դասա-  
կարգային տարբերութիւններ և շահագործում ծնող  
բոլոր պատճառների լիակատար վոչնչացումը : Ընչ է  
նշանակում հաղթահարել կապիտալիզմի մնացուկներն  
եկոնոմիկայում և մարդկանց զիտակցութիւնն մեջ :  
Պայքար սոցիալիստական (հանրային) սեփականու-  
թիւնն նկատմամբ հողատար վերաբերմունք ցույց տա-  
լու համար : Պայքար աշխատանքի նկատմամբ սո-  
ցիալիստական վերաբերմունքի համար—ընդդէմ լող-  
բերի, պոկողների և աշխատանքից խուսափելու դեմ,  
հավասարաման վնասակար թերութիւն ու պրակտի-  
կայի դեմ : Սոցիալիստական մրցակցութիւնը և հար-  
վածաշնութիւնը, դերազանցիկների շարժումը : Սո-  
ցիալիստական մրցակցութիւնն նոր ետապը — յուրաց-  
ման մրցակցութիւնն : Աշխատանքի հերոսները Խոր-  
հրդային Միութիւնն մեջ. պրոլետարական պետութիւն  
հողմից նրանց սիրով և հողատարութիւնը շրջապատե-  
լը : Մեր հայրենիքին անձնուրաց նվիրվածութիւն  
դաստիարակելու խնդիրները : Պայքար մեծապետական  
շովինիզմի և տեղական նացիոնալիզմի մնացուկները  
դեմ :

Ժողովրդական ամբողջ տնտեսութիւնն սեփական  
վերակառուցումը յերկրորդ հնգամյակի տնտեսական  
գլխաւոր խնդիրն է : Արդյունաբերութիւնն աճումը  
յերկրորդ հնգամյակում : Ինչ պետք է կառուցվի  
յերկրորդ հնգամյակում : Գյուղատնտեսութիւնն զար-  
յերկրորդ հնգամյակում : Գյուղատնտեսութիւնն զար-  
դացումը : Տրանսպորտի զարգացումը : Ապրանքա-  
շրջանառութիւնն աճումը : ԽՍՀՄ ժողովրդիսորհի և  
համ Կ(բ)Կ Կենտկոմի վորոշումը «հացի դները իջեց-  
ման և մսի, ձկան, շաքարի, ճարպի ու կարտոֆիլի

քարտային սխտեմը վերացնելու մասին» և «Սպառողական կոոպերացիայի աշխատանքի մասին»—պետական խոշորագույն միջոցառումներ են, վորոնք բացառիկ բարենպաստ դրուժյուն են ստեղծում խորհրդային առևտրի աննախընթաց բարգավաճման համար: Բանվորները և գյուղացիները նյութական բարեկեցութեան վերելքը: Կուսակցութեան և կառավարութեան վորոշումները պարենամթերքի ամբողջ առևտրում քարտային սխտեմը վերացնելու և գյուղի Սպառողական կոոպերացիայի աշխատանքի մասին—խոշորագույն ուղենիշ է յերկրորդ հնգամյակի անտեսական վերակառուցումը—յերկրորդ հնգամյակի անտեսական կարևորագույն խնդիր—բարձրացնել աշխատավորութեան սպառման մակարդակը 2—3 անգամ — կատարման համար մղվող պայքարում: Աշխատանքի արտադրողականութեան բարձրացումը, ինքնարժեքի իջեցումը, արտադրանքի վորակի բարելավումը: Պրոլետարական դիկտատուրայի հզորութեան և ԽՍՀՄ-ի պաշտպանութեան հետագա ամրապնդման խնդիրները:

ՏԱՍՆՅԵՐԿՈՒՅԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ

ՄԵՐ ՊԱՅՔԱՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ  
ԿՈՄՈՒՆԻՋՄՆ Ե

Սոցիալիզմն— անդասակարգ հասարակութունն է, Կոմունիզմի առաջին փուլը: Սոցիալիզմը մի կարգ է, վոր թույլ չի տալիս ճրիակերութուն, մի կարգ, վորի մեջ հասարակութեան բոլոր աշխատունակ անդամները պարտավոր են աշխատելու—ըստ իրենց ընդունակութունների: Սոցիալիզմի ժամանակ յուրաքանչյուրն

ստանում է ըստ իր աշխատանքի քանակի ու վորակի: «Յուրաքանչյուրից ըստ ընդունակութունների—յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» — այսպես է սոցիալիզմի—կոմունիզմի առաջին փուլի լոզունգը: Վորն սեակցիոն հալստարարման վտանգը. և ինչու հարկավոր է պայքարել նրա դեմ: Սոցիալիզմի շրջանում պրոլետարական դիկտատուրայի պետական հզորութեան ամրապնդման անհրաժեշտութունը: Կոմունիստական հասարակութեան բարձրագույն փուլը—լիակատար կոմունիզմը—աճում է նրա ստորին փուլից: Կոմունիզմի բարձրագույն փուլի հիմնական գծերը,— արտադրողական ուժերի հետագա հզոր դարգացումը. քաղաքի և գյուղի հակադրութեան լիակատար վոչնչացումը. մտավոր և Ֆիզիկական աշխատանքի հակադրութեան վոչնչացումը և հասարակութեան դասակարգերի բաժանման վոչնչացումը: Պետութեան մահացումը լիակատար կոմունիզմի ժամանակ: «Յուրաքանչյուրից ըստ յուր ընդունակութունների — յուրաքանչյուրին ըստ յուր պահանջների» — այսպես է բարձրագույն փուլի—կոմունիզմի լոզունգը:

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ԶՐՈՒՅՑ


ԿՈՄՄՆՅՆԵՐՆԸ ՎՈՐՊԵՍ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՀԵՂԱՓՈՒՈՒՅԱՆ ՇՏԱՐ

Մարքան ու Ենգելսը վորպես բանվոր դասակարգի միջազգային միութեան մարտիկներ: Նրանց՝ «Պրոլետարներ բոլոր յերկիրներ, միացե՛ք» լոզունգը: I ինտերնացիոնալի հիմնադրումը Մարքսի և Ենգելսի

կողմից : I Ինտերնացիոնալը վերստին պրոլետարական միջազգային համերաշխության և բանվոր դասակարգի համար հետեվողական-հեղափոխական պայքարի դրոշ : II Սոցիալիստական ինտերնացիոնալը, — II ինտերնացիոնալում ուղորտունիզմի հաղթության պատճառները : Համաշխարհային պատերազմը . II ինտերնացիոնալի կրակը : Լենինի (բուլղարի) պայքարը կոմունիստական ինտերնացիոնալ ստեղծելու համար : Լենինը վերստին կոմինտերնի հիմնադիր : Լենինն ու Ստալինը վերստին կոմունիստական ինտերնացիոնալի առաջնորդներ : III կոմունիստական ինտերնացիոնալը վերստին I Ինտերնացիոնալի ավանդների պահպան, նրա ժառանգորդը : Կոմինտերնի ծրագիրը-համաշխարհային կոմունիզմի համար մղվող պայքարի ծրագիր : Կոմունիստական ինտերնացիոնալը վերստին համաշխարհային պրոլետարատի իսկական ներկայացուցիչ, կապիտալի լծից նրա ազատագրության և բոլոր աշխատավորների ազատագրության աննկուն մարտիկ : Կոմինտերնի լողունը-դասակարգը դասակարգի դեմ : Կոմինտերնի պայքարը մասսաներ նվաճելու համար : Կոմինտերնի ծրագիրը միասնական ճակատի տակալիցայի մասին : Կոմինտերնի VII կոնգրեսի մշակած պրոլետարական միասնական ճակատի և ժողովրդական միասնական ճակատի տակալիցայի ֆաշիզմի և պատերազմի սպառնալիքի դեմ մղվող պայքարում : Կոմունիստների հերոսական պայքարը ֆաշիստ դահլիճների դեմ : Ընկերներ Թեմանի և Դիմիտրովի անձնուրաց հերոսությունը : Ընկեր Դիմիտրովը վերստին կոմինտերնի ղեկավար :

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՁՊԵՍ Ե ՊԱՇՏ-ՊԱՆՈՒՄ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸ և ԻՆՁ ՓՈՒՀԱՐԱ-ԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՆԵՆՔ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷՅՏ

Ինչու կապիտալիզմի ժամանակ անխուսափելի յեն պատերազմները : Համաշխարհային պատերազմի վրա համոզ վտանգը : Պատերազմի այդ վտանգը ծնող և ուժեղացնող պատճառները : Նրա գլխավոր հրճիվները-Գերմանական ֆաշիզմն ու ճապոնական իմպերիալիզմը : Ընկ . Ստալինը բուրժուազիայի շրջաններում մտատացվող պատերազմի չորս պլանների մասին : Մեր պայքարը պատերազմի վտանգի դեմ և խաղաղության հետեողական քաղաքականությունը : ԽՍՀՄ-ի Ազգերի Լիգայի մեջ մտնելը : Մեր կողմից հարձակման պակտեր կնքելը : Ինչու մենք համաձայնեցինք վաճառել ՉՍ, յերկաթուղին (Չին-արևելյան յերկաթուղին) : Կոմինտերնի VII կոնգրեսն ինչ ասաց համաշխարհային սպանդը կանխելու մասին : Կոմինտերնի VII կոնգրեսը պատերազմի դեմ պայքարելու համար միասնական ճակատ ստեղծելու մասին : Կոմինտերնի VII կոնգրեսը այն ժողովուրդների ազգային անկախության պաշտպանության մասին, վրոնց պատերազմն ստրկացում է ստրկում : Պատերազմի սպառնալիքը Խորհուրդների յերկրի դեմ և մեր խնդիրը-պատրաստ լինել նրան հարձակումից պաշտպանելու համար : Մեր հայրենիքի, իսկական ժողովրդական կարմիր բանակի հրամանատարների համար զինվորական կոչումներ



մտցնելու մասին Կենտգործկոմի և ԺԿՍ-ի վորոշման  
նշանակությունը: Հայրենիքի պաշտպանությունը  
ԽՍՀՄ-ի յուրաքանչյուր քաղաքացու առաջնագուն  
պարտականությունն է: Կոմունիստական կուսակցու-  
թյունների առաջ կոմիտեերնի VII կոնգրեսի առաջադ-  
րած գլխավոր խնդիրը-պայքարն է պատերազմի դեմ  
և հանուն ԽՍՀՄ-ի պաշտպանության:



« Ազգային գրադարան



NL0187505



№ 15 409.

157

174  
С 36-1  
С 1100

1  
2



**ПРИМЕРНЫЙ ПЛАН БЕСЕД  
КАНДИДАТОВ И СОЧУВСТВУЮЩИХ,  
НЕ УЧИВШИХСЯ В КРУЖКАХ ПОЛИТГРАМОТЫ**  
Армипартидат, Ереван